

ԱՆԺԵԼ ՆԵՐՍԷՍԻ ՔԻՒՐՔՃԵԱՆ
ԼԻԼԻԹ ԱՇՈՏԻ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՀԱՅՐԵՆԻ ԱՂԲԻՐ

Գ.
տարի



ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՒԱՆ 2019

ՀՏԴ 373.3(075.3)
ԳՄԴ 74.2g72
Ք 530

Քիրքձեան Ա. Ն., Տէր-Գրիգորեան Լ. Ա.
Ք 530 Հայրենի Աղբիր: Գ. տարի / Ա. Քիրքձեան, Լ. Տէր-Գրիգորեան.—Եր.:
«Զանգակ» հրատ., 2019.— 96 էջ:

ՀՏԴ 373.3(075.3)
ԳՄԴ 74.2g72

ISBN 978-9939-68-757-5

© Քիրքձեան Ա. Ն., Տէր-Գրիգորեան Լ. Ա., 2019
© «Զանգակ-97» ՍՊԸ, 2019

Դասագիրքը ամբողջութեամբ կամ որեւէ մասը կարելի չէ տպագրել կամ պատճենահանել՝ առանց
հրատարակչութեան թոյլտուութեան:

Հրատարակչութեան տնօրէն՝ ԷՄԻՆ ՄԿՐՏՉԵԱՆ
Խմբագիր՝ ԼՈՒՍԻՆԵ ԳԱԼՍԵԱՆ
Տեխնիկական խմբագիր՝ ՆՈՒՐԴ ՓԱՐՍԱՂԱՆԵԱՆ
Կազմի ձեւաւորումը՝ ԼՈՒՍԻՆԵ ՇԱՐԱՄԲԵՆԱՆ
Համակարգչային ձեւաւորումը՝ ԺԱԳ ԹՈՓԱԼԱԳԵԱՆԻ


Տպագրութիւնը՝ օֆսէթ
Չափսը՝ 60 x 84 1/8: Թուղթը՝ օֆսէթ
Ծաւալը՝ 12 տպ. մամուլ




ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0051, Երեւան, Կոմիտասի 49/2
Հեռ.՝ (+37410) 23 25 28, էլ. փոստ՝ info@zangak.am
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
www.facebook.com/zangak

ԴՊՐՈՑ, ՈՒՍՈՒՄ,
ԳԻՏՈՒԹԻՒՆ



ԱՅԲ, ԲԵՆ, ԳԻՄ, ԴԱ



վարդ
մարդ
գարդ
կարդալ

¹ վեհ – բարձր

² արեւավառ – արեւի պէս միշտ վառ մնացող

³ խրոխտ – հպարտ, համարձակ

⁴ յաւեր – յաւերժ՝ միշտ

⁵ պանծալի – պարծենալու՝ հպարտանալու արժանի, շատ գովելի

⁶ մշտադալար – հոս՝ միշտ երկրասարդ

«Այբ, բեն, գիմ, դա».

Տղանս, կարդա՛.

Անով մեծցիր, անով ապրէ,

Չայն լա՛ւ հնչէ,

Հնչէ հպարտ՝

Բերնովդ վարդ:

Թող միշտ ապրի

Անունը վեհ¹ Մեծ Մաշտոցի,

Որ ստեղծեց մեր հայատառ

Սուրբ գիրերը արեւավառ²...

«Այբ, բեն, գիմ, դա».

Տղանս, կարդա՛.

Անով դուն քեզ խրոխտ³ զգա.

Ուր ալ ըլլաս, դուն միշտ ջանա՛

Յաւերժ յիշել մեր Այբ–բենը:

Դարերուն հետ քալեց յաւերժ⁴,

Եկաւ ինձի,

Ինձմէ՛ քեզի...

Աղբիւրի պէս կարկաչելով՝

Կը հոսի միշտ տարածուելով:

«Այբ, բեն, գիմ, դա».

Տղանս, կարդա՛

Ու կարդացո՛ւր հայոց լեզուն

Մեր յաջորդող սերունդներուն,

Որ մայր լեզուն մեր պանծալի⁵

Մշտադալար⁶ յաւերժ ապրի...

? Հարցումներ եւ հրահանգներ

1. Մայրը ի՞նչ խրատ կու տայ իր զաւակին:
2. Ի՞նչ պիտի ընենք, որ մեր լեզուն գոյատեւէ ու յաւերժ ապրի:
3. Հայերէն այբուբենը ի՞նչ օգուտներ տուած է հայ ժողովուրդին:
4. Գրողը ինչո՞ւ կ'ըսէ՝ «Թող միշտ ապրի Անունը վեհ Մեծ Մաշտոցի»:
5. Սորվեցէ՛ք Մարթէն Եօրկանցի «Այբ, բեն, գիմ» երգը:

ԱՅԻ, ԲԵՆ, ԳԻՄ

Խօսք եւ երաժշտութիւն՝ Մարթէն Եօրկանցի

երգ

Այր, բեն, գիմ, դա, եչ, զա, է, ըթ, թօ, ժէ, ինի լին, 8
 խէ, ծա, կեմ, իօ, ծա, դատ, ճէ, մեմ, իի, նու, շա, վօ, 16
 չա, պէ, քէ, ոա, սէ, վեւ, տիւն, ըէ, ցօ, 23
 հիւն, փիւր, քէ, եւ, օ, ֆէ, Հա - յե - ըն է, հա - յե - ըն, 29
 շու - տով սո - վո - ըն, դըպ - ըո - ցի ըն - կեր - նե - ըով կար - դամ ու զը - ըն: 35
 Հա - յե - ըն է, հա - յե - ըն 1,2 շու - տով սո - վո - ըն, դըպ - ըո - ցի ըն - կեր - նե - ըով կը խօ - սեմ, կը խօ - սեմ: 49

Ա	Ժ	Ճ	Ռ
Բ	Ի	Մ	Ս
Գ	Լ	Յ	Վ
Դ	Խ	Ն	Տ
Ե	Ծ	Շ	Ր
Զ	Կ	Ո	Յ
Է	Հ	Ձ	ՈՒ
Ը	Ձ	Պ	Փ
Թ	Ղ	Ջ	Ք
		Օ	Ֆ



1. Դասարանական ընդհանուր աշխատանքով՝ ըսէք այբուբենի ամէն մէկ գիրով սկսող մէկական բառ (1-ով սկսող բառ չունինք):
2. Հետեւեալ բառակապակցութիւնները գործածեցէք նախադասութիւններու մէջ.

մայրենի լեզու, հայերէն գիրեր, սիրելի հայրենիք, հարգատ դպրոց, անուշիկ մայրիկ:

¹ Լոկ – միայն



ՀԱՆԵԼՈՒԿ

Ան ի՞նչն է, ի՞նչը.
 Լոկ՝ եօթը փառ,
 Եօթը փառով՝ ծանօթ բառ.
 Եթէ դու զայն լաւ գիտնաս,
 Ամէն գրած կը կարդաս:

ԵՐԿՈՒ ԹԻԵՐ



թի
թիավար
թիավարել

Օր մը հողագործ Թովմասը իրենց գիւղի ուսուցիչին հետ նա-
աակով կը ճամբորդէր:

Թովմասը կը գանգատէր թէ իր դրացի հողատէրը՝ Ղուկասը,
ամէն տարի շատ աւելի լաւ եւ առատ բերք կը ստանայ, քան
ինք:

— Ես ալ,— կ'ըսէր Թովմասը,— իր ունեցածին չափ եզ ունիմ,
իրմէ աւելի զօրաւոր եմ եւ աւելի կ'աշխատիմ: Ինչո՞ւ իր բերքը
իմինէս աւելի լաւ եւ առատ կ'ըլլայ:

Ուսուցիչը լսեց անոր գանգատները եւ ըսաւ.

— Միայն ուժն ու առողջութիւնը չեն բաւեր մարդու: Ուրիշ
բան մըն ալ պէտք է, զոր Ղուկասը ունի, իսկ դուն չունիս:

— Ինչ բան:

— Ուսում:

— Ինչի՞ս պէտք է ուսումը, երբ առողջ ու զօրաւոր եմ,— ըսաւ
Թովմասը:

— Նաւակը աւելի արագ ու ապահով վարելու համար ի՞նչ կ'ը-
նես,— հարցուց ուսուցիչը:

— Երկու թիերը միասին կը քաշեմ,— պատասխանեց Թով-
մասը:

— Մէկ թին չի՞ բաւեր:

— Ո՛չ, նաւակը ծուռ կ'երթայ եւ շուտ տեղ չի հասնիր:

— Կը տեսնե՞ս,— ըսաւ ուսուցիչը,— ինչպէս որ նաւակը մէկ
թիով չի կրնար լաւ սահիլ, այնպէս ալ մարդ միայն առողջու-
թեամբ եւ ուժով չի կրնար յառաջդիմել: Ուսում ալ պէտք է իրեն,
ապա թէ ոչ՝ դանդաղ կը յառաջանայ: Ղուկասը ուսում առած
է: Գիրքերուն շնորհիւ գիտէ թէ լաւ ցորեն աճեցնելու համար
ինչպէս աշխատելու է եւ ի՞նչ միջոցներ գործադրելու է: Ատոր
համար ալ՝ ամէն տարի քուկինէդ շատ աւելի լաւ եւ առատ բերք
կ'ունենայ, հակառակ որ քեզի չափ առողջ ու զօրաւոր չէ:

Հարցումներ եւ հրահանգներ

1. Ղուկասը ինչո՞ւ աւելի լաւ եւ առատ բերք կը ստանար:
2. Ի՞նչ կը սորվեցնէ այս պատմութիւնը. ուսումը ինչո՞ւ կարեւոր է բոլորիս համար:



Ա. եւ Բ. շարքի բառերէն ընտրեցէք յարմար զոյգեր եւ կազմեցէք բառակապակցութիւններ.

Ա. *անուշիկ, պայծառ, առատ, շուտ, առողջ, մանկական, մեծ.*

Բ. *բերք, առաւօտ, մայրիկ, խնձոր, խաղ, երախայ, հասնիլ:*

Օրինակ՝ *անուշիկ մայրիկ:*



ՍՈՐԿԻՆՔ.

Երկու բառերու այսպիսի կապակցութիւնը կը կոչուի **բառակապակցութիւն:**

ԱՍԱՑՈՒԱԾՔ

Չգիտնալը ամօթ չէ, չսորվիլը ամօթ է:



ՆԱՅԱԾ Է, ԲԱՅՑ ՉԷ ՏԵՍԱԾ

Երրորդ դասարանի աշակերտները պտոյտի գացեր էին անտառ՝ իրենց ուսուցչուհի օրիորդ Զապելին հետ: Անոնք մարգագետնին՝ վրայ նստած՝ կը հանգստանային: Ուսուցչուհին հարցուց աշակերտներուն.

— Դուք ամէն բան կրնա՞ք տեսնել, երբ նայիք ձեր շուրջը:

— Այո՛,— պատասխանեցին բոլորը միասին:

— Լա՛ւ, հիմա պիտի փորձենք,— ըսաւ ուսուցչուհին:— Անտառէն դուրս ելլելու ատեն ուշի ուշով դիտեցէք եւ տեսէք թէ ինչեր կան ձեր ճամբուն վրայ:

Երբ անտառէն դուրս ելան, օրիորդ Զապելը հարցուց Նազիկին.

— Նազիկ, ըսէ՛ տեսնեմ՝ ինչեր տեսար ճամբան:

— Աջ ու ձախ ծառեր կային, իսկ ծառերուն տակը՝ խոտ:

— Ուրիշ բան չտեսա՞ր:

— Ո՛չ, չտեսայ, օրիորդ:

— Հիմա ալ դո՛ւն պատմէ, Սեւակ:

— Մենք անցանք եղեփններու անտառին մէջէն: Մեր նստած կողմերը ծառերը շատ էին: Յետոյ կամաց–կամաց պակսեցան: Ծամբան բաց տեղ մը կար: Հոն խոտը աւելի շատ էր, քան ծառերուն տակը: Դալար խոտերուն մէջ ծաղիկներ կային: Անոնց վրայ գոյնզգոյն թիթեռնիկներ կը թռչէին: Սունկ ալ տեսայ ծառերուն տակ: Ուրեմն՝ անձրեւ եկած է:

Օրիորդ Զապելը շատ գոհ մնաց Սեւակին պատասխանէն: Ան աւելի ուշադիր դիտած էր չորս կողմը: Ատոր համար ալ շատ բան կրցած էր տեսնել:



Երրորդ չորրորդ

¹ մարգագետին — խոտով ու ծաղիկներով ծածուկած ընդարձակ փարածութիւն՝ արօտավայր

Գ Զարցումներ եւ հրահանգներ

1. Ո՞վ աւելի շատ բան տեսած էր ճամբան՝ Նազիկը, թէ՞ Սեւակը. ինչո՞ւ:
2. Պատմեցէ՛ք՝ Սեւակը ինչեր տեսած էր ճամբան:
3. Ի՞նչ է այս պատմութենէն քաղելիք դասը:



Ընդօրինակեցէ՛ք հետեւեալ բառերը՝ կէտերուն տեղ դնելով յարմար ձայնաւորներ: Առանձին գրեցէ՛ք այդ ձայնաւորները եւ գո՛ց ըսէք.

h.g, տ.ր, մ.ծ, նկեր, ս.րտ, խ.սք, խ.տ, ց.ր:

Յիշե՛նք.

Հայերէնը ունի 6 ձայնաւոր հնչիւններ, որոնք կը գրուին 8 գիրով (ե-ն, ո-ն բառին մէջ կը կարդացուին է, օ եւ կը ներկայացուին փակագիծերու մէջ):

Հայերէնի ձայնաւորներն են՝ **ա, է/ե/, ը, ի, օ/ու/, ու:**

ՀԵՂԵՂ¹

Հնդկաստանի մայրաքաղաք Տելիիի մէջ հեղեղ եղաւ: Գետին ջուրերը դուրս ելան ափերէն ու ծածկեցին քաղաքին մեծ մասը: Զուրը քշեց տարաւ փլած տուներուն տախտակները, սնտուկներ, ծառեր, ոչխարներու հօտեր: Հազարաւոր մարդիկ խեղդուեցան: Միայն կամուրջը մնաց անվնաս: Անոր վրայ մեծ բազմութիւն մը հաւաքուած էր: Բոլորը յուզուած կը խօսակցէին: Զայն մը լսուեցաւ յանկարծ.

— Նայեցէք, հոն նայեցէք:

Ամէնքը նայեցան ցոյց տրուած կողմը: Գետին մէջտեղը տակառ մը կը լողար: Անոր մէջէն երկու պզտիկ գլուխներ կ'երեւէին: Մանուկները կը շարժէին իրենց ձեռքերը եւ օգնութիւն կը խնդրէին:

Անմիջապէս օգնութեան հասաւ ազատարար² նաւակը եւ ափ հանեց զանոնք. քոյր ու եղբայր էին:

Երբ պզտիկները քիչ մը հանգստացան, մարդիկ այս ու այն կողմէ սկսան հարցնել թէ արդեօք ինչնո՞ւ անոնք մտած էին տակառին մէջ: Անոնցմէ մէկը սկսաւ պատմել.

— Մայրիկը եւ հայրիկը տունը չէին: Մեր բակը լեցուած էր ջուրով: Ճամբան գոցուած էր: Բակին մէջ պարապ տակառ մը կար: Զայն պարանով կապեցինք ծառին, որ նաւակի պէս նստինք տակառին մէջ ու չխեղդուինք: Բայց պարանը թրջեցաւ, փրթաւ, եւ ջուրը քշեց տարաւ տակառը:



հեղեղ ջրհեղեղ

Չարցումներ եւ հրահանգներ

1. Հեղեղը ինչ վնասներ տուած էր:
2. Մարդիկ ինչ տեսան գետին վրայ եւ ինչպէ՞ս փրկեցին փոքրիկները:
3. Պզտիկները ինչ պատմեցին:
4. Իրենց կեանքը փրկելու համար անոնք ինչնո՞ւ մտան տակառին մէջ:
5. Ինչ կը սորվեցնէ այս պատմութիւնը ձեզի:



Դասին մէջէն գտէք բառեր եւ ցոյց տուէք որ **o** հնչիւնը բառին մէջ կը գրուի թէ՛ **o**-ով, թէ՛ **n**-ով:

¹ **հեղեղ** — գետի, ծովու ջուրերու, ափերէն դուրս գալով, ամեն ինչ ծածկելը
² **ազատարար** — ազատող, փրկող

ԻՆՉԷՆ Է ԱՐԴԵՕՔ

Արմէնը եւ Ջաւէնը նապաստակ շատ կը սիրէին: Խնդրեցին որ հայրիկը նապաստակ գնէ իրենց համար:

Հայրը խոստացաւ մէկի փոխարէն երկու նապաստակ գնել: Եղբայրները շատ ուրախացան եւ որոշեցին բոյն շինել: Մէկը քարը բերաւ, միւսը ցեխը պատրաստեց, եւ պատերը շարեցին: Երբ սկսան տանիքը ծածկել, պատերը փլան:

Նորէն ցեխ պատրաստեցին, նորէն շարեցին պատերը: Սակայն բոյնը նորէն փլաւ: Չէին գիտեր թէ ինչէն է: Հարցուցին հայրիկին:

— Ինչէն է, հիմա կը տեսնենք,— ըսաւ հայրիկը,— ես կ'օգնեմ ձեզի:

Հայրը առաջ հողը փորեց: Փոսին մէջ քարեր շարելով՝ հիմ դրաւ: Յետոյ տղաներուն ըսաւ որ իրենք շարեն պատերը: Բայց անոնք կը վախնային որ բոյնը նորէն փլչի:

— Բան մըն ալ չ'ըլլար. առանց վախնալու շարեցէք,— ըսաւ հայրիկը:

Իրաւ ալ, պատերը չփլան: Եղբայրները զարմացան: Այն ատեն հայրիկը բացատրեց որ բոյնին փլչելուն պատճառը հիմ չունենալն էր: Եթէ տունը հիմ չունենայ, պատերը եւ առաստաղը հաստատուն չեն ըլլար ու կը փլչին:

Արմէնը եւ Ջաւէնը հասկցան որ հաստատուն պատ եւ առաստաղ ունենալու համար տունը պէտք է հիմ ունենայ:

հիմ
հիմնադրել

Հարցումներ եւ հրահանգներ

1. Բոյնը ինչո՞ւ կը փլչէր:
2. Հայրը ի՞նչ սորվեցուց իր տղաներուն:
3. Ըսէ՞ք տունի մը մասերուն անունները:
4. Դպրոցական մը ի՞նչ պէտք է սորվի այս դասէն:



Դասին մէջէն գտէ՞ք բառեր եւ ցոյց տուէ՞ք որ է հնչիւնը բառին մէջ կը գրուի թէ՛ է-ով, թէ՛ ե-ով:

ԱՍՍՑՈՒԱԾՔ

Տան մը հիմը ամուր պէտք է ըլլայ:

ԻՆՉԵՐՈՒ ՎՐԱՅ ԳՐԱԾ ԵՆ ՄԱՐԴԻԿ

Շատ ու շատ տարիներ առաջ թուղթ ու գիր չկար: Մարդիկ կենդանիներ ու պատկերներ կը նկարէին պատերուն եւ ժայռերուն վրայ: Այդ նկարներէն ու պատկերներէն ամէն մէկը բան մը կը նշանակէր: Ատոր համար ալ **պատկերագիրեր** կը կոչուէին անոնք:

Յետոյ մարդիկ սկսան գրել կաւէ շինուած քառակուսի քարերու վրայ: Կը գրէին գործիքով մը, որուն ծայրը սուր էր եւ հետզհետէ կը լայննար: Այդ գործիքը կը կոչուէր սեպ: Ատոր համար ալ այդ նշանները կոչուեցան **սեպագիրեր**:

Հին ատեն յոյները կը գրէին հալած մոմի բարակ շերտով ծածկուած տախտակներու վրայ: Եգիպտացիները կը գրէին ծառի կեղեւին եւ *պապիրուս* կոչուող բոյսին տերեւներուն վրայ:

Հայերը սկսան գրել հորթի կաշիին վրայ, որ կը կոչուէր *մագաղաթ*: Ձեռքով կը գրէին. ատոր համար այդ գիրքերը կոչուեցան **ձեռագիրեր**:

Երեսնի մէջ շքեղ շինութիւն մը կայ, որ կը կոչուի *Մատենադարան*: Հոն կը պահպանուին մագաղաթի վրայ գրուած հազարաւոր գիրքեր:

Այսպէս՝ մարդիկ գրած են քարի, կաւի, փայտի, ծառի կեղեւի, տերեւներու եւ մագաղաթի վրայ, մինչեւ որ ստեղծուած է թուղթը:



**պատկերագիր
սեպագիր
ձեռագիր**

Չարցումներ եւ հրահանգներ


1. Մարդիկ ինչերո՞ւ վրայ գրած են հին ատեն եւ ինչպէ՞ս:
2. Իսկ հայերը:
3. Գիրերու քանի՞ տեսակներ կան: Ձեր գիրքերը ինչպիսի՞ գիրով գրուած են:
4. Կը յիշէ՞ք թէ թուղթը ինչէ՞ կը պատրաստուի եւ ինչպէ՞ս. պատմեցէ՞ք:



Կազմեցէ՛ք բառեր **ընկերասիրութիւն** բառին հնչիւններէն՝ **ը, ն, կ, ե, ռ, ա, ս, ի, ռ, ու, թ, ի, ւ, ն** (գոնէ 20 բառ կրնաք կազմել):
Օրինակ՝ ընկեր, թիւ, սիրուն...

Յիշենք.

Հնչիւններու այն խումբը, որ իմաստ ունի, կը կոչուի բառ:
Քիչ բառեր կան, որոնք կազմուած են միայն մէկ հնչիւնէ. այսպէս՝ է, ու, ա՛, ի՛, է՛, օ՛, ո՛ւ, ը՛:



ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԱՍԸ



Պզտիկ Արան ամէն օր,
 Բաներ սորված նորանոր,
 Ուրախ-գուարթ տուն կու գայ
 Եւ քոյրիկին դաս կու տայ:
 — Յասմիկ, Յասմիկ, եկուր տես,
 Թուղթն այս կը կոչուի քարտէս:
 Տես, աս ծով է կապուտակ,
 Ատ գետ է, միսն ալ՝ գետակ:
 Ասոր ալ կ'ըսեն կղզի,
 Իսկ անոր՝ թերակղզի:
 Աս ցամաք է, ահա, տես,
 Ցամաքը հող է, գիտես:
 Տես այն փոքրիկ օղակը.
 Ան ցոյց կու տայ քաղաքը:
 Իսկ աս լեռ է, կամ թէ սար՝
 Բարձր, ամպին հաւասար:
 Հայրն ու մայրը կը լսեն
 Ու ժպտելով գոհ կ'ըսեն.
 — Ուսուցիչ է մեր տղան,
 Ապրի խելացի Արան:

աշխարհ
աշխարհագրութիւն

Հարցումներ եւ հրահանգներ

1. Ինչ բան է քարտէսը:
2. Արան ինչնո՞ւ ուրախացած էր:
3. Քարտէսին վրայ ինչէ՞ր ցոյց տուաւ Յասմիկին:
4. Քարտէսին վրայ ցոյց տուէ՞ք Հայաստանը, Արարատ լեռը եւ Աեւանայ լիճը:



Հետեւեալ բառերուն առաջին կամ վերջին բաղաձայնը փոխելով՝ նոր բառեր ըսէք.

հող, քոյր, տուն, հատ, սառ, պար, մազ, զարդ, գիր, թութակ, սէր:

Օրինակ՝ հող — գող, դող, լող, կող, շող, տող, փող...

հով, հոտ, հոս, հոլ, հոր...

ՀԱՆՆԵԼՈՒԿՆԵՐ

Ան ի՞նչ է, ի՞նչ, ըսէ՛ ինձի.
 Հաւասար են դաշտ ու սար.
 Մեծ աշխարհ մը՝ մարդ չկայ,
 Գետը, ծովը ջուր չկայ,
 Իսկ քաղաքը տուն չկայ:

Աշխարհ մըն է՝
 Համրացած
 Ու մեր պարփն
 Ամրացած:

ՆԿԱՐԸ

Դասարանին դուռը բացուեցաւ, եւ ներս մտաւ նկարչութեան ուսուցչուհին: Բոլորը ոտքի ելան:

— Բարեւ, պզտիկներ:

— Բարեւ ձեզ,— պատասխանեցին պզտիկները:

— Նստեցէ՛ք,— ըսաւ ուսուցչուհին ու բարի ժպիտով նայեցաւ աշակերտներուն:

— Սիրելի աշակերտներ,— շարունակեց ան,— այսօր ձեզմէ ամէն մէկը թող նկարէ, ինչ որ կը փափաքի: Ամէնէն լաւ նկարները ցուցահանդէսի պիտի ներկայացնենք:

— Կեցցէ... Ես ամէնէն լաւ կը նկարեմ: Ես պիտի շահիմ առաջնութիւնը,— ըսաւ Յակոբը:

— Ես ալ,— ուրախացաւ Անուշը:

— Ես Արարատ լեռը պիտի նկարեմ,— ասելցուց Ազնիւը:

Աշակերտները սկսան նկարել: Ուսուցչուհին մէկիկ-մէկիկ կը մօտենար անոնց եւ ուղղումներ կ'ընէր: Կ'օգնէր՝ կոտրած մատիտները տաշելու: Այդպէս շարքէ շարք անցնելով՝ մօտեցաւ Յասմիկին: Յասմիկը, ձեռքը ճակատին դրած, աչքերը գոց, նստած էր:

— Դին ինչու չես նկարեր, Յասմիկ,— հարցուց ուսուցչուհին:

Յասմիկը երազէ մը արթնցաւ կարծես: Անմիջապէս առաւ մատիտը եւ սկսաւ նկարել: Կը նկարէր ու կը քնքէր, նորէն կը նկարէր ու կը ներկէր:

Դասը վերջացաւ: Ուսուցչուհին հաւաքեց նկարները:

Յաջորդ օրը, երբ Յասմիկը դասարան մտաւ, բոլորը սկսան շնորհաւորել զինք. անոր նկարը շահած էր առաջին մրցանակը:

Յասմիկին աչքերը փայլեցան ուրախութենէն: Վազելով մտաւ սրահ եւ յուզուած մօտեցաւ նկարին: Շոյեց նկարը, ուր ամբողջ հասակով կեցած էր մանկապարտէզի իր առաջին ուսուցչուհին՝ օրիորդ Զապէլը:



Նկար
Նկարիչ
Նկարչութիւն



? Չարցումներ եւ հրահանգներ

1. Յասմիկը զո՞վ նկարեց եւ ինչո՞ւ:
2. Դո՞ւք ինչպէս կ'արտայայտէք ձեր զգացմունքները ուսուցիչներուն հանդէպ:



1. Այբուբենի շարքով գրեցէք հետեւեալ բառերը.
աշակերտ, դասարան, գիրք, բոլոր, զուարթ, ընկեր,
Էլիզ, թերթ, երգել, ժրագան:
2. Ըսէք հետեւեալ բառերուն **հակառակ** իմաստը արտայայտող բառեր.
լայն, մեծ, առողջ, լոյս, կարծ, լաւ, բարձր, ուրախ:
Օրինակ՝ լայն — նեղ:



ՍՈՐՎԻՆԸ.

Իրարու հակառակ իմաստ ունեցող բառերը կը կոչուին **հակահոշ** բառեր:

Լայն ու նեղ հակահոշ բառեր են:



Ս. Կապուտիկեան

ՄԵՐ ԳԻՏՈՒՆԸ¹

Մեր գիտունը, քուն թէ արթուն,
Գիրք կը կարդայ մինչ իրիկուն,
Կը կարդայ գիրք ու լրագիր,
Կը կարդայ լուռ եւ ուշադիր
Թէ մարդ ինչպէս պիտի օգնէ,
Ինչպէս իր կեանքը նուիրէ
Հայրենիքին, ընտանիքին,
Ընկերներուն, մեծին, փոքրին.
Ծնողներուն խօսքը լսէ,
Անոնց հոգը թեթեւցնէ:
Կը կարդայ ան... Մայրը յոգնած՝
Զինք կը կանչէ քնքուշ, կամաց.
— Կարապետ ջան, խանութ գնա:
— Ես ժամանակ չունիմ հիմա...
Մեծ-մայրիկը ջուր կը խնդրէ:
— Գիրք կը կարդամ, քիչ մը սպասէ...
Ահա այդպէս ամբողջ օրը
Գիրք կը կարդայ մեր գիտունը:

գիտուն
գիտնալ
գիտնական

¹ գիտուն — շար բան գիպող

Չարցումներ և հրահանգներ

1. Ինչ բաներու մասին կը խօսուի Կարապետին կարդացած գիրքերուն մէջ:
2. Ինչէն կ'երեւի որ Կարապետը կարդացած գիրքերէն բան մըն ալ չի հասկնար:
3. Գրողը ինչո՞ւ գիտուն կը կոչէ տղան. ան իրա՞ն գիտուն է:
4. Ինչ կը սորվեցնէ այս ոտանաւորը. գիրք կարդալը նրբ օգուտ կու տայ մեզի:



1. Ըսէ՞ք իմաստները **նոյն հնչումը** ունեցող հետեւեալ զոյգ բառերուն.

Փուռ-բուռ, քայլ-գայլ, հարթ-յարդ, թոյլ-դոյլ, սէր-սեր, հարկ-յարկ:

2. Վերը տրուած համանուն բառերու զոյգերով կազմեցէ՛ք բառակապակցութիւններ:

Օրինակ՝ *փուռ — հացի փուռ*
բուռ (ափ) — բուռ մը ցորեն:



ՍՈՐՎԻՆՔ.

Հնչումով նոյն, բայց իմաստով և գրութեամբ տարբեր բառերը կը կոչուին **նոյնանուն կամ համանուն** բառեր:

ՀԱՆԵԼՈՒԿ

*Փոքրիկ արտ մը գիտեմ ես,
Որ ձերմակ է ձիւնի պէս.
Հոն ցանած են սեւուկ հունար,
Որ ձեր մկրքին է սնունդ:*

ԱՍԱՑՈՒԱԾՔ

*Կարելորը միայն կարդալը չէ,
Կարելորը կարդացածն դաս քաղելն է:*

ՉԱՅՆԱԻՈՐ ԵՒ ԲԱՂԱՉԱՅՆ ՀՆՉԻԻՆՆԵՐՈՒՆ ՎԻՃԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ¹

Օր մը ձայնաւոր եւ բաղաձայն հնչիւնները վիճաբանեցան² իրարու հետ:

— Մենք թիւով ձեզմէ շատ ենք,— ըսին բաղաձայնները ձայնաւորներուն:

— Ճիշդ է, մենք ձեզմէ քիչ ենք,— պատասխանեցին ձայնաւորները.— **6** քոյրիկներ ենք եւ **8** գիրով կը գրուինք՝ **ա, է (ե), օ (ո), ը, ի, ու**: Այո, քիչ ենք, բայց առանց մեզի վանկ չկայ: Առանց մեզի դուք վանկ չէք կրնար կազմել: Իսկ մենք մինակնին ալ կրնանք վանկ ըլլալ: Օրինակ՝ **ա-թռռ, օ-ձառ, ի-րի-կուն, ը-սել, Է-լիզ, ու-րախ**:

— Ո՞վ ըսաւ որ առանց ձայնաւորի վանկ չկայ,— աղմուկ բարձրացուցին բաղաձայնները:— Շատ վանկեր կան, որոնց մէջ ձայնաւոր չկայ: Օրինակ՝ **պ-տուղ, գն-դակ, բար-ձր, Մ-կր-տիչ** եւ այլն:

— Կը սխալի՞ք, բաղաձայն քոյրիկներ,— ըսին ձայնաւորները:— Այդ վանկերուն մէջ **անգիր ը** ձայնաւորը կայ. չի գրուիր, բայց կ'արտասանուի: Իսկ տողադարձի ատեն ալ կը գրենք զայն՝ տողի վերջին վանկին եւ յաջորդ տողի առաջին վանկին մէջ: Օրինակ՝ **հասկը-նալ** (հաս-կընալ), **արթըն-նալ** (ար-թըննալ), **Մը-կըրտիչ** (Մկըրտիչ), **պը-տուղ, բար-ձըր, գըն-դակ** եւ այլն:

Բաղաձայնները հիմա արդէն լաւ հասկցան ձայնաւոր հնչիւններուն արժէքը:

ձայն ձայնաւոր բաղաձայն

¹ **վիճաբանութիւն** — միեւնոյն հարցի կամ խնդրի մասին փարբեր կարծիքներ յայտնելը

² **վիճաբանեցան** — նոյն հարցին մասին փարբեր կամ հակառակ կարծիքներ յայտնեցին

Հարցումներ եւ հրահանգներ

1. Ի՞նչ է վանկը:
2. Քանի՞ տեսակ կ'ըլլան վանկերը:
3. Քանի՞ ձայնաւոր ունի հայերէնը, եւ քանի՞ գիրով կը գրուին անոնք. ինչո՞ւ:
4. Ո՞ր **ը** հնչիւնը կը կոչուի **անգիր ը**. Երբ կը գրենք զայն:
5. Քանի՞ բաղաձայն ունի հայերէնը. բաղաձայն քոյրիկները ի՞նչ հասկցան այս վիճաբանութենէն. ի՞նչ արժէք ունին ձայնաւորները:
6. **Ի՞նչ նոր բաներ սորվեցաք դպրոցին մասին դասերէն. ըսէ՞ք՝ գիրար ամբողջացնելով:**



ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔ



ՄՕՐ ՄԻՐՏԸ

Մօրս սրտին հետ աշխարհն եմ չափեր,
Նորէն մեծ էր ան, մեծ էր ու անգին.
Արեւ աչքերուն լոյսն էր ան թափեր՝
Լուսնակ դառնալով որդու օրոցքին¹:

Եւ հիմա քիչ է թէ աչքերս տամ,
Թէ սիրտս հանեմ ու տամ մայրիկիս:
Ա՛խ, մայր երգելէ ինչպէ՛ս կշտանամ.
Մայրս պատկերն է Մայր Հայրենիքիս:

Հարցումներ եւ հրահանգներ

1. Բանաստեղծ Յովհաննէս Շիրազը իր մօրը սրտին եւ հոգիին մեծութիւնը ինչպէ՛ս կ'արտայայտէ:
2. Ան ի՛նչ բաներ քիչ կը համարէ՝ մօրը հանդէպ իր սէրը եւ երախտագիտութիւնը արտայայտելու համար:
3. Փորձեցէ՛ք բացատրել՝ ի՛նչ կը նշանակէ՝ «Մայրս պատկերն է Մայր Հայրենիքիս» արտայայտութիւնը:

գին
անգին

¹ օրոցք — օրորոց



Ըսէ՛ք հետեւեալ բառերուն նոյն կամ մօտիկ իմաստն ունեցող բառեր.

ջինջ, աղուոր, կտրիճ, ուրախ, անուշ, սպիտակ, խոշոր:
Օրինակ՝ **ջինջ** — մաքուր, յստակ, զուլալ, վճիտ:



ՍՈՐՎԻՆՔ.

Նոյն իմաստը ունեցող կամ իմաստով մօտ բառերը կը կոչուին **հոմանիշ** բառեր:

ՀԱՅՐԱ

Երբ դաշտին մէջ Շիրակի¹
Պայծառ արեւ կը ծագէր,
Հայրս ամէն Կիրակի
Զիս մեր այգին կը տանէր:

Հայրս գառնուկ մ'էր առած,
Ճերմակ գառնուկ սիրունիկ,
Ես ալ գառնուկ մը դարձած՝
Ժամերով կը խաղայինք:

Գառնուկս մէկ կ'արածէր,
Մէկ կ'ըլլար ինծի պահակ,
Երբ յոգնած՝ քունս տանէր,
Ու պառկէի ծառին տակ:

Հովն ալ անուշ մայրիկիս
Համբոյրն ինծի կը բերէր,
Կամ մօրուքը² հայրիկիս
Զիս քունիս մէջ կը շոյէր:



գառ գառնուկ գառնարած

¹ Շիրակ — Հայաստանի մարզերէն՝ շրջաներէն մէկը

² մօրուք — կգակի եւ այլի վրայ բուսնող մազ

Չարցումներ եւ հրահանգներ

1. Փոքրիկ տղան ինչպէ՞ս կ'անցընէր Կիրակի օրերը:
2. Տղան ի՞նչ կը զգար քունին մէջ. գրողը ի՞նչ ըսել կ'ուզէ ասով:



1. Ընտրեցէ՛ք **հոմանիշները** եւ գրեցէ՛ք դէմ դիմաց.
 - ա) անուշ, կակուղ, պզտիկ, կրկին, սպիտակ, մեծ, դանդաղ, փակ, ուշիմ, ուրախ.
 - բ) փոքր, գոց, խելացի, քաղցր, ճերմակ, նորէն, փափուկ, խոշոր, զուարթ, կամաց:
2. Ընդօրինակեցէ՛ք նախադասութիւնները՝ փակագիծերուն մէջ տրուած բառերէն յարմարը գրելով.
 - ա. Մարգագետինը (**ծող, ցօղ**)ով ծածկուած էր:
 - բ. Մայրս թանին մէջ (**սար, սառ**) դրաւ:
 - գ. Աշակերտները (**կառք, կարգ**)ով եկեղեցի մտան:
 - դ. Սասունցի Դաիթը (**դուռ, թուր**)ով հարուածեց Մարայ Մե-լիքը:
 - ե. Հովիհին շունը (**գայլ, քայլ**)ին վրայ յարձակեցաւ:
 - զ. Ոչխարներու (**հոտ, հօտ**)ը կ'արածի:
 - է. Կաթին (**սեր, սէր**)ը համով է:

ԾՆՈՂԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Շատ տարիներ առաջ Էթնա¹ հրաբուխը կը բռնկի²: Հրաբուխին բերանէն լաւա կը ժայթքի³ եւ շրջակայ գիւղերը կ'այրէ ու մոխիր կը դարձնէ: Օդը մութով կը լեցուի: Մօտիկ գիւղերուն բնակիչները ասդին-անդին կը փախչին՝ տանելով իրենց թանկագին առարկաները:

Փախչող մարդոց մէջ կային նաեւ երկու պատանիներ, բայց անոնց բեռը բոլորովին տարբեր էր: Անոնք կը տանէին իրենց ծերունի ծնողքը, որոնք անկարող էին քալելու:

Այդ պատանիներուն ազնիւ վարմունքին վրայ բոլորը հիացան եւ յուզուեցան:

Զարմանալին այն էր որ այդ պատանիներուն անցած ճամբան կանաչ մնաց. լաւան հոն չէր հասած: Մինչդեռ չորս կողմը հողերը այրած ու սեւցած էին:

Ժողովուրդը, որ ազնիւ զգացումներ ունէր, կարծեց թէ ծնողասէր պատանիներուն անցած ճամբան հրաշքով պահպանուած էր՝ անոնց բարի գործը վարձատրելու համար: Այդ պատճառով բարի մարդիկ այդ վայրը կոչեցին Բարեպաշտի դաշտ:

ԾՆՈՂ ԾՆՈՂԱՍԵՐ ԾՆՈՂԱՍԻՐՈՒԹԻՒՆ

¹ Էթնա — հրաբուխ՝ Սիկիլիա կղզին վրայ
² կը բռնկի — այրելու կը սկսի
³ կը ժայթքի — խորքէն ուժգին կերպով դուրս կը թափի
⁴ Երախտագետ — մեկու մը ըրած բարիքը գնահատող՝ ճանչցող

Հարցումներ եւ հրահանգներ

1. Հրաբուխը ինչ վնասներ տուաւ ժողովրդին:
2. Ժողովուրդը ինչնո՞ւ հիացած էր երկու եղբայրներուն վրայ. անոնց համար ինչն էր ամէնէն մեծ հարստութիւնը:
3. Մարդիկ ինչպէ՞ս բացատրեցին ճամբուն կանաչ մնալը եւ ինչպէ՞ս վարձատրեցին երկու եղբայրներուն ծնողասիրութիւնը:
4. Դո՞ւք ինչպէս կ'արտայայտէք ձեր սէրն ու յարգանքը ձեր ծնողքին հանդէպ: *Գրեցէք փոքրիկ պատմութիւն մը այդ մասին:*



1. Ըսէք **հականիշները** հետեւեալ բառերուն.
փոքր, ծիշդ, շատ, տխուր, կարեւոր, խելացի, համեստ, գոհ, աշխատասէր, հարուստ.
2. Ինչնով կը տարբերին իրարմէ հետեւեալ զոյգ բառերը եւ ինչ կը նշանակեն.
շուշան — Շուշան, մանուկ — Մանուկ, ապրիլ — Ապրիլ, անուշ — Անուշ, պայծառ — Պայծառ, գոհար — Գոհար, համեստ — Համեստ, կորին — Կորին, յասմիկ — Յասմիկ, ազնիւ — Ազնիւ:

ԱՍՍՅՈՒԱԾՔ

- * Պարուեցէ՛ք ձեր ծնողքը ձեր լաւ գործերով:
- * Երախտագետ⁴ զաւակը ծնողքին ուրախութիւնն է:

ՄԵԾ ՄԱՅՐԻԿԻՆ ՆԱՄԱԿԸ

Իմ անուշիկ թոռնիկս,

Երէկ ստացայ նամակդ: Զիս շատ կը յուզէ որ մեծ մայրիկիդ հեռաւորութիւնը քեզ այդչափ կը տխրեցնէ:

Թոռնիկս, դուն միշտ միտքս կու գաս քու մանկական խաղերովդ, վառվռուն աչքերովդ: Ամէն օր լուսանկարիդ առջեւ կը խօսիմ հետդ: Կ'օրհնեմ քեզ եւ մաղթանքներ կ'ընեմ քեզի ու բոլորիդ համար:

Ամէն վայրկեան ինձի հետ ես, անուշիկս: Այն օրէն, երբ բաժնուեցայ քեզմէ, աւելի շատ կը սիրեմ քեզի տարեկից¹ տղաքը:

Ինչ աղուոր է ապրիլ մանուկ հոգիներու հետ: Այս պահուս դէպք մը յիշեցի. ինչ եղաւ Տիգրանը: Կը յիշես, հարկաւ: Մայրը կ'աշխատէր եւ ժամանակ չէր ունեցած լուալու պզտիկին շապիկը: Այդ օրը Տիգրանը մարզանքի դաս ունէր: Խնդրեցիր ինձմէ որ շապիկներէդ մէկը փոխ տանք իրեն:

— Մեծ մայրիկ,— ըսիր,— կոկիկ տղայ է, չ'աղտոտեր. միայն մէկ ժամ պիտի հագնի ու վերադարձնէ:

Երբ երեկոյեան ծալած բերիր շապիկը, ըսի քեզի.

— Աղէկ չ'ըլլամ որ ասիկա Տիգրանին տանք: Դուն ուրիշ երկու շապիկ ալ ունիս:

Ուրախութենէդ ցատկոտեցիր ու փաթուեցար ինձի.

— Անո՛ւ սիրտ,— ըսիր,— անո՛ւ սիրտ, ինչպէս կը սիրեմ քեզ:

Մեծցիր, սիրելիս, մեծցիր այս բարի եւ անուշ զգացումներով, որպէսզի օր մը դառնաս բարութեան տիպար մը:



տարի տարեկից

¹ տարեկից — նոյն տարիքը ունեցող

? Յարցումներ եւ հրահանգներ

1. Կարդացէք այն տողերը, ուր արտայայտուած է մեծ մայրիկին եւ թոռնիկին փոխադարձ սէրը:
2. Կրնա՞ք ըսել թէ ինչ լաւ յատկանիշներ ունի թոռնիկը: Սիրեցի՞ք զինք. ինչո՞ւ:
3. Դ՞իւք ինչպէս կ'արտայայտէք ձեր սէրը ձեր մեծ մայրիկներուն եւ մեծ հայրիկներուն հանդէպ: *Անուշիկ նամակ մը գրեցէ՛ք անոնց:*



Սորվեցէ՛ք իմաստները եւ գրութիւնը հետեւեալ բառերուն. գանոնք գործածեցէ՛ք նախադասութիւններու մէջ.

վառել — վարել, սառ — սար, լուռ — լուր, առատ — արատ (թերութիւն, բիժ՝ աղտ), դուռ — թուր (սուր), թոյլ — դոյլ, կոունկ — կրունկ, գառ — քար:

Օրինակ՝ Հայրս վառարան կը վառէ:
Հողագործը արտը կը վարէ:

ԳԱՆԾ¹ ՄԸ ՈՒՆԻՆՔ



Գանձ մը ունինք տունին մէջ,
Անոր անունն է **մայրիկ**,
Որ ունի սիրտ մը անշէջ²
Եւ կու տայ սէրը քաղցրիկ:

Ուժ մը ունինք տունին մէջ,
Անոր անունն է **հայրիկ**.
Կը պաշտպանէ մեզ անվերջ,
Կը բերէ հաց ու բարիք:

Աստղ մը ունինք հեռաւոր,
Որ լուսատուն է մեր տան.
Յոյսեր կու տայ նորանոր,
Եւ անունն է **Հայաստան**:

գանձ գանձապահ գանձանակ

¹ գանձ — հարստութիւն
² անշէջ — չմարող

Հարցումներ եւ հրահանգներ

1. Բանաստեղծուիին ինչերո՞ւ հետ կը համեմատէ մայրիկը եւ հայրիկը. ինչո՞ւ:
2. Մեր հայրենիք Հայաստանը ինչի հետ կը համեմատէ. ինչո՞ւ:
3. Հայրենիքը ինչ յոյսեր կու տայ հայուն:



Ուշի ուշով կարդացէ՛ք եւ ըսէ՛ք թէ քանի՛ բառերէ կազմուած են հետեւեալ երկու խումբ բառերը.

ա) **մօրեղբայր, կէսօր, վայրէջք, դասընկեր, ծովեզերք, ծովափ.**

բ) **դասագիրք, ժամացոյց, վարդագոյն, մօրաքոյր, ծաղկավաճառ:**

Յիշենք.

Մէկէ աւելի բառերէ կազմուած բառը կը կոչուի **բարդ բառ**:
Այդ բառերը երբեմն իրարու կը միանան **ա** ձայնաւորով, որ կը կոչուի **յօդակապ**:

ԲԺԻՇԿԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Իմ սիրելի պզտիկ բարեկամս,

Այս տողերը քեզի կը գրէ սրտաբան բժիշկ մը, որ կը բուժէ սրտի հիւանդութիւնները:

Գիտցիր որ սիրտը կը պահպանէ մարդու կեանքին գոյութիւնը: Ժրաջան կերպով¹ կ'աշխատի եւ անգամ վայրկեան մը հանգիստ ընելու իրաւունք չունի:

Սիրտը միշտ արթուն է: Կը կծկուի եւ արիւնը կը մղէ² մարդուն ամբողջ մարմնին մէջ: Եթէ սիրտը հիւանդանայ, մարդը կը դառնայ թոյլ, տկար ու դժբախտ:

Ուրեմն՝ սիրտդ առողջ պահէ: Զօրացուր սիրտդ, որպէսզի ըլլաս առողջ, ուժեղ ու կայտառ:

Շատ օգտակար է մարզանքը: Ամէն առտու կանոնաւ ելիր, մարզանք ըրէ եւ ցնցուղ ընդունէ կամ պաղ ջուրով շփումներ կատարէ: Մաքուր օդին քալէ: Ընտրէ մարզանքի այն ձեւը, զոր կը սիրես, եւ կանոնաւորապէս մարզուէ:

Շատ կարեւոր է քունը: Օրական 8-9 ժամ պէտք է քնանաս: Երկար մի նստիր հեռատեսիլին, համակարգիչին առջեւ: Զափաւոր ու ժամանակին կեր: Կարեւոր է մաքուր պահել ակոսները: Ամէն առտու եւ իրիկունը քնանալէ առաջ խնամքով մաքրէ զանոնք:

Գիտցիր որ առողջ միտքը միայն առողջ մարմնի մէջ կըրնայ ըլլալ: Ահա՛ հին մարդոց իմաստուն խօսքը. «Առողջ միտք՝ առողջ մարմնի մէջ»: Իսկ առողջ մարմին ունենալու համար առողջ սիրտ պէտք է ունենալ:

Իմ պզտիկ բարեկամս, առողջ սրտի շնորհիւ միայն կըրնաս դասերդ լաւ սորվիլ, երջանիկ ապրիլ: Առողջ սրտի շնորհիւ միայն կըրնաս մեծ գործեր կատարել եւ ծնողքիդ ու ազգիդ արժանաւոր զաւակը ըլլալ:



խորհիւ
խորհուրդ

¹ Ժրաջան կերպով — առանց կենալու, շարունակ

² կը մղէ — յառաջ կը շարժ

Չարցումներ եւ հրահանգներ

1. Ինչ բանի կը ծառայէ սիրտը:
2. Առողջ սիրտը ինչերո՞ւ կը նպաստէ:
3. Ինչ խորհուրդներ կու տայ բժիշկը՝ սիրտը առողջ պահելու համար:
4. Կրնա՞ք բացատրել «Առողջ միտք՝ առողջ մարմնի մէջ» ասացուածքին միտքը:
5. Գո՞ց սորվեցէք տրուած ասացուածքները:



Կազմեցէ՛ք **բարդ բառեր** հետեւեալ զոյգ բառերով՝ աւելցնելով **ա** յօդակապը հոն, ուր պէտք է.

անուշ+հոտ, հող+գործ, թանկ+արժէք, ծով+ափ, գործ+տէր, մանուշակ+գոյն, գիր(գր)+տախտակ, դաս+գիրք, քուր(քր)+հոր, մոխիր (մոխր)+աման, դաս+ընկեր:



ԱՍԱՅՈՒԱԾՔ

* Մարմինը մաքուր պահողը իր կեանքը կ'երկարէ:

* Ժամանակին քնացողը եւ կանուխ արթնցողը առողջ ու երկար կ'ապրի:

* Աւելի լաւ է առողջութիւնը պահպանել, քան թէ հիւանդութիւնը բուժել:

ԱՐԱԳԻԼՆԵՐՈՒՆ ԸՆՏԱՆԻՔԸ

Ամէն գարուն գաղթած արագիլները կը վերադառնան իրենց հին բոյները եւ կը սկսին նորոգել զանոնք:

Զոյգ մը արագիլներ ալ նորոգեցին իրենց բոյնը, զոր շինած էին մեր շէնքին տանիքը:

Մայր արագիլը երկու հաւկիթ ածեց եւ թուխս նստաւ¹: Իսկ հայր արագիլը անոր համար ուտելիք կը բերէր:

Շուտով այդ հաւկիթներէն երկու սիրուն ձագեր դուրս ելան: Մայր եւ հայր արագիլները կը խնամէին ձագերը. անոնց համար կեր կը բերէին, բոյնը կը մաքրէին:

Եկաւ ամառը: Արագիլներուն ձագերը դեռ չէին սորված թռչիլ:

Օր մը այրեցաւ այդ տունը: Բոյնին մէջ միայն ձագերը կային: Անոնք վախցած կծկուեր էին բոյնին մէկ անկիւնը:

Եկաւ մայր արագիլը: Սարսափած այս ու այն կողմ թռաւ: Փորձեց կտուցով բռնել ձագուկները, որ տանի, բայց չկրցաւ: Իսկ կրակը կը մօտենար բոյնին: Մայր արագիլը տեսաւ որ չի կրնար փրկել իր ձագերը, թելերը տարածեց ձագուկներուն վրայ. ուզեց այդպէս պաշտպանել զանոնք:

Շուտով բոցերը պիտի հասնէին բոյնին, եւ մայր արագիլը պիտի այրէր ձագերուն հետ:

Յանկարծ վերադարձաւ հայր արագիլը: Խենթի պէս մօտեցաւ բոյնին եւ սուր ձայն մը հանելով՝ կարծես բան մը ըսաւ մայր

ձագ ձագուկ

¹ **թուխս** նստաւ — հաւկիթներուն վրայ նստաւ՝ ձագեր հանելու համար

արագիլին: Ատոր վրայ՝ հայր ու մայր արագիլները, կտուցներով մէկական ձագ բռնած, թռան ու գացին:

❓ Չարցումներ եւ հրահանգներ

1. Պատմեցէք արագիլներուն ընտանիքին մասին:
2. Ինչպէ՞ս արտայայտուեցաւ մայր արագիլին անձնագոհ սէրը ձագերուն հանդէպ:
3. Ինչպէ՞ս փրկուեցաւ արագիլներուն ընտանիքը:



Առանձին սիւնակներու մէջ գրեցէք յօդակապ ունեցող եւ յօդակապ չունեցող բարդ բառերը: Յոյց տուէք՝ ո՞ր բառերէն կազմուած են, եւ գի՞ծ քաշեցէք յօդակապին տակ.

հիւանդապահ, ծովեզերք, ճաշասենեակ, խաղընկեր, արեւածագ, ջրհոր, տասնմէկ, վաթսունչորս, հայրենասէր, արօտավայր, ինքնաշարժ, երկաթուղի, ծաղկաման, մոխրաման:



Ըստ Յովհ. Թումանեանի

ՄԱՅՐ ԵՂՆԻԿԸ

Սեպտեմբեր էր: Որսորդ Յովսէփին հետ գացեր էինք Լոռիի անտառները՝ որսորդութեան: Որոշեցինք գիշերը անցընել ծերունի Յովակիմին բանջարանոցը, որպէսզի լուսադէմին հասնէինք անտառ:

Ծերունին ուրախութեամբ ընդունեց մեզ եւ ներս առաջնորդեց: Մինչեւ ուշ գիշեր կրակին շուրջը նստած՝ կը խօսէինք որսորդական կեանքէն:

— Տղա՛ք, քանի որ խօսք բացուեցաւ որսի մասին, բան մը պիտի պատմեմ ձեզի,— ըսաւ ծերունի Յովակիմը:

— Պատմէ, Յովակիմ հայրիկ:

— Տարի մը որսորդութեան գացեր էի: Եկան լուր բերին թէ թռոզ հիւանդացեր է, քեզ կ'ուզէ: Անմիջապէս ճամբայ ինկայ: Անտառի ճամբայէն գացի՝ խորհելով թէ որս-մորս կը հանդիպի: Յանկարծ խշռոց մը լսեցի եւ տեսայ որ թուփերը կը շարժին: Քար մը նետեցի: Մէյ մըն ալ տեսնեմ՝ եղնիկի մը ձագուկին ականջները ցցուեցան: Թուփերը նորէն շարժեցան. եղնիկին ձագը ճամբայ կը բանար որ փախչէր: Հրացանը երեսիս՝ նշան առի թուփերու ճիշդ շարժող կէտին: Հրացանը պայթելուն պէս եղնիկին ձագը ցատկեց, թուփերուն մէջէն դուրս թռաւ եւ գետին ինկաւ:

**որսորդ
որսորդութիւն
որսորդական**

— Տղայք,— շարունակեց ծերունի որսորդը,— այնպէս կը տքար, այնպէս կը տքար խեղճ կենդանին, կարծես մեռնող երախայ ըլլար: Վարպետ որսորդներէն լսեր էի եւ ըսի. «Ասոր մայրը անպատճառ տեսեր է զիս ու փախեր. ուր որ է հիմա ետ կու գայ»:

Մտայ ծառի մը տակ եւ սպասեցի: Շատ մնացի թէ քիչ, չեմ գիտեր: Մէյ մըն ալ տեսնեմ՝ ահա դէմէն եկաւ, բայց ինչպէս եկաւ... Ես տեսայ, դուք չտեսնէք: Մէկ խօսքով՝ մօր մը նման: Եկաւ, տեսաւ իր ձագը՝ ծառի մը տակ փռուած, անշունչ, արիւնի մէջ թաթխուած:

Դունչը երկնցուցած ինչպէս կը բառաչէր, ինչպէս կը լզեր վերքը... Հրացանս վերցուցի, քաշուեցայ այդ տեղէն ու շարունակեցի ճամբաս: Կը մտածէի թէ ինչ է տարբերութիւնը մօր մը եւ այն սարի եղնիկին միջեւ. ոչինչ: Բոլորին սիրտն ալ սիրտ է, բոլորին վիշտն ալ՝ վիշտ, մայրական վիշտ...

❓ Հարցումներ եւ հրահանգներ

1. Պատմեցէք Յովակիմ հայրիկին նկարագրած դէպքը մայր եղնիկին մասին:
2. Յովհաննէս Թումանեանը ինչ եզրակացութիւն կը հանէ այս յուզիչ դէպքէն:
3. *ա. Կրնա՞ք յիշել՝ ուրիշ ինչ պատմութիւններ սորվեցաք մարդոց եւ կենդանիներու ծնողական սիրոյ մասին:
բ. Ընտանիքին մասին դասերէն ինչե՞ր սորվեցաք եւ դ՞ր մէկը ամէնէն շատ սիրեցիք. ինչո՞ւ: Գրեցէ՛ք անոր համառօտ բովանդակութիւնը:*



1. Կազմեցէ՛ք բարդ բառեր՝ *ա* յօդակապը դնելով հոն, ուր պէտք է.

դաս+գիրք, հող+գործ, մեծ+անուն, արծաթ+գոյն, ժամ+ցոյց, կէս+օր, քաղցր+համ, նամակ+բեր, ժամ+գործ, անուշ+հոտ, տերեւ+խիտ, դաս+ընկեր, ծով+եզերք, քայլ+երգ, այս+պէս:

2. Իւրաքանչիւր բառի քով գրեցէ՛ք անոր *հոմանիշը* եւ *հականիշը*.

դանդաղ, քաղցր, խաւար, շատ, յստակ, ննջել, աղտոտ, խնարհ, ցուրտ, սիրուն, ունետր, ջանասէր, հսկայ, ձերմակ, արի:

Օրինակ՝ *դանդաղ — կամաց — արագ:*





ԻՆՉԸ ԼՊԻ Է, ԻՆՉԸ ԳԷՇ Է





Հ. Կարծիկեան

ԼԱԻ ՆՊԱՏԱԿ¹

Ով կ'ապրի այս արեւին տակ,
Անշուշտ ունի լաւ նպատակ.

Ծիլը կ'ուզէ հողը ձեռքել,
Բարձրանալ վեր, ծաղկիլ, բուրել:

Մեղուն՝ թռչիլ ծաղկէ ծաղիկ
Ու հաւաքել հիւթ ու շաղիկ²:

Ծառը կ'ուզէ արագ մեծնալ
Եւ ամէնուն անուշ միրգ³ տալ:

Ջուրը կ'ուզէ վազել, երգել,
Մաքուր լուալ ոտք ու ձեռքեր:

— Ըսէք՝ այս վառ արեւին տակ
Դուք ալ ունիք լաւ նպատակ:

բոյր բուրել

¹ նպատակ — այն բանը, որուն կը ջանանք հասնիլ

² շաղիկ — ծաղիկներու վրայ նստած ջուրի կաթիլներ, ցօղ

³ միրգ — պտուղ

Չարցումներ եւ հրահանգներ

1. Ինչ նպատակներ ունին ծիլը, ծառը, մեղուն, ջուրը:
2. Դո՞ւք ինչ նպատակներ ունիք:
3. Ինչ պէտք է ընէք՝ ձեր նպատակին հասնելու համար:



Ուշադրութիւն ըրէք հետեւեալ բառերուն ուղղագրութեան.

ճամբայ, շուկայ, ներկայ, բացակայ, ապագայ, կը խաղայ, տեսայ, կ'երթայ...



ՍՈՐԿԻՆՔ.

Հայերէնի մէջ բառերը կը վերջանան **այ-ով** եւ ոչ թէ **ա-ով**:
Բացառութիւն են՝

ա. Երկիրներու, քաղաքներու եւ կարգ մը ուրիշ անուններ՝ *Սուրիա, Լաթաքիա, Էթնա, Արփա (գետ), Մուսա (լեռ)...*

բ. Հրաման արտայայտող բառերը՝ *խնդրի, գնի, պրոն...*

գ. *ասիկա, ատիկա, անիկա, հիմա, ահա, ապա, հապա բառերը:*

դ. *ա-ով վերջացող օտար բառերը՝ նոթա, ստտա, աղա:*

ԴԵՂՁԵՐԸ

Մայրիկը չորս որդիներուն մէկական դեղձ տուաւ: Փոքրիկները առաջին անգամ կը տեսնէին այդչափ հիւթեղ¹ եւ ընտիր դեղձեր: Իրիկունը հայրիկը հարցուց անոնց.

— Համո՛վ էին դեղձերը:

— Շատ համով էր իմ դեղձս, անո՛ւշ եւ հիւթեղ,— ըսաւ մեծ տղան՝ Արամը, — պահեցի կուտը, որ գարունը զայն թաղեմ մեր պարտէզը:

— Ես իմ դեղձս անմիջապէս կերայ,— ըսաւ փոքրիկ Տիգրանը: Շատ սիրեցի: Բերնիս մէջ կը հալէր:

— Ես դեղձս ծախեցի փողոցի տղաներէն մէկուն: Այդ դրամով շուկայէն տասը հատ դեղձ կրնամ գնել,— ըսաւ Արմէնը:


— Դուն ինչ ըրիր, Հայկ,— հարցուց հայրիկը ամէնէն փոքր տղուն:

— Ես իմ դեղձս տուի հիւանդ ընկերոջս: Ինք չէր ուզեր առնել. զայն սեղանին վրայ դրի ու փախայ:

— Հիմա ըսէ՛ք թէ ո՛վ ամէնէն լաւ օգտագործած է իր դեղձը,— հարցուց հայրիկը:

— Հայկը, Հայկը,— միասին պատասխանեցին երեք տղաները:

Մայրիկին աչքերուն մէջ ուրախութեան արցունքներ երեցան: Ան քնքշութեամբ գրկեց իր բարեսիրտ զաւակը:



ընտիր ընտանիք

¹ հիւթեղ — հիւթալի, հիւթով լեցուն

Չարցումներ եւ հրահանգներ

1. Ինչ բնատրոփին ունի եղբայրներէն ամէն մէկը. բնութագրեցէ՛ք:
2. Դուք անոնցմէ որոնն կ'ուզէիք նմանիլ. ինչո՞ւ:



Ընդօրինակեցէ՛ք հետեւեալ բառերը՝ անոնց վերջը աւելցրէ՛նելով յ գիրը հոն, ուր պէտք է.

Ճամբա, հիմա, ասիկա, Սուրիա, բացակա, Ֆրանսա, եկա, կարդա՛, կու գա, պողոտա, ջանա՛, կը ջանա, անիկա, քահանա, ահա, ապա, շղթա, մեքենա, հաւատա՛, Ամերիկա, Ասիա:

ԻՆՉՈՒՒ ՏԵՐԵՑԱՅ



Գարնանային գեղեցիկ առտու մըն էր: Մանկական պարտէզը իր կանաչ հագուստը հագած էր: Գոյնզգոյն ծաղիկները արեւին շողերուն տակ կը ժպտէին: Իսկ թռչունները անուշ-անուշ կ'երգէին: Թռչուններուն ծլվլոցին կը խառնուէին փոքրիկներուն զուարթ ձայները:

Մայրիկս, քոյրիկս եւ ես կը պտըտէինք պարտէզին մէջ: Հոն պզտիկներուն համար տեսակ-տեսակ խաղալիքներ կային: Փոքրիկ քոյրիկս նստած էր ձիուկի մը վրայ. չէր ուզեր բաժնուիլ անկէ: Անդին կը դառնար ճօճանակը¹: Նայողը կը կարծէր թէ գոյնզգոյն ծաղկեփունջ մը կը պտըտէր:

Մենք նաւակով զբօսնեցանք լիճին վրայ: Յետոյ ծաղկանոցին քով նստած՝ կը դիտէինք մանուկներուն խաղերը:

Յանկարծ երեք պզտիկներ, կանաչ խոտերը եւ գոյնզգոյն ծաղիկները կոխկոտելէն, անցան մեր քովէն: Անոնցմէ մէկը պաղպաղակ կ'ուտէր, միւսը՝ շաքար: Անոնք թուղթերը գետին նետեցին: Իսկ երրորդ պզտիկը բռնած էր ծաղկեփունջ մը. զայն կազմած էր այս պարտէզէն փրցուցած գեղեցիկ ծաղիկներէն:

Ես շատ, շատ տխրեցայ...

Երբ մայրիկս տեսաւ որ ես տխրեցայ, հարցուց ինձի.

— Յասմիկ, աղջիկս, ինչնո՞ւ տխրեցար...

տխուր
տխրիկ
տխրութիւն

¹ ճօճանակ — օրօրուելու խաղալիք

Հարցումներ եւ հրահանգներ

1. Դուք կրնա՞ք ըսել թէ Յասմիկը ինչնո՞ւ տխրեցաւ:
2. Նկարագրեցէ՛ք մանկական պարտէզին գեղեցկութիւնը:
3. Ուրիշ ինչպէ՞ս կրնաք ըսել հետեւեալ նախադասութեան միտքը. «Մանկական պարտէզը իր կանաչ հագուստը հագած էր»:
4. Պատմեցէ՛ք այս դասը ընդարձակ:

ա) Ընդօրինակեցէ՛ք հետեւեալ **բարդ բառերը** եւ ըստ բառը կազմող մասերու՝ բացատրեցէ՛ք անոնց իմաստները.

ծաղկազարդ, հիւանդապահ, ժպտերես, ծաղկաման, ձեռագիր, գրատախտակ, հիրասէր, ննջասենեակ, հիրասենեակ, դասագիրք:

Օրինակ՝ **ծաղկազարդ** — **ծաղիկներով զարդարուած**

բ) Ընդօրինակեցէ՛ք միայն այն բառերը, որոնք երկու կողմէն ալ նոյնը կը կարդացուին.

թութ, քոյրիկ, մեծ, ծեծ, պարտէզ, մոմ, ապա, կատակ, ծաղիկ, պարապ, նաւակ, քաղաք, թուղթ, թաթ, հագուստ, Արա, Աննա, առտու, Սիս, լալ, պարտէզ, ահա:

ԱՍՍՅՈՒԱԾՔ

Ուրիշները ուրախացնելու մէջ փնտրէ հաճոյքը:

ՈՎ ԻՆՉՊԷՍ ՎԱՐՈՒԵՑԱՒ

Փոքրիկը բարձրաձայն կու լար փողոցը: Կարծես անոր ձեռքէն խլած էին ամբողջ աշխարհը:

— Ինչ լալկան տղայ է,— ըսաւ Խաչիկը, որ անոր ձեռքէն առած էր հողը¹ եւ ինք կը խաղար:

— Տնւր իմ հոլս,— կը պոռար տղան լալով:

Իսկ Խաչիկին ընկերները՝ Վահէն եւ Սուրէնը, կանգնած՝ լուռ կը դիտէին:

Այդ պահուն անոնց քովէն կ'անցնէր Ժիրայրը: Երբ իմացաւ անոր լացին պատճառը, խիստ ձայնով ըսաւ Խաչիկին.

— Ինչո՞ւ կը լացնես տղան, էտ տուր հողը:

— Ես քիչ մը պիտի խաղայի ու նորէն պիտի տայի իրեն,— կմկմաց Աշոտը:

— Ո՞ր դասարանի աշակերտ ես,— հարցուց Արան:

— Երրորդ,— պատասխանեց Աշոտը շուարած:

— Դո՞ւք որ դասարանի աշակերտներ էք,— հարցուց Ժիրայրը Խաչիկին ընկերներուն:

— Մենք ալ երրորդ. դասընկերներ ենք:

— Երրորդ. չէք ալ ամչնար: Իսկ այս տղան տակաւին դպրոց ալ չ'երթար,— յանդիմանեց Ժիրայրը եւ շարունակեց ճամբան:

Հողը արդէն պզտիկին ձեռքն էր: Տղան ուրախ կը ժպտէր ու կը խաղար: Արցունքները չորցած էին, բայց երբեմն-երբեմն սիրտը վեր կ'ելլէր, եւ կու լար. շատ վիրաւորուած էր:

Իսկ երեք ընկերները շուարած կեցած էին:

— Լա՛ւ, ըսենք թէ Խաչիկը յանցաւոր է: Մենք ինչ ըրած ենք, մեր յանցանքը ինչ է,— զարմացած կը հարցնէին իրարու Վահէն եւ Սուրէնը:



ընկեր դասընկեր

¹ հող —

Հարցումներ եւ հրահանգներ

1. Ըսէ՛ք՝ ով ինչպէս վարուեցաւ:
2. Դուք կրնա՞ք ըսել Վահէին եւ Սուրէնին թէ ո՞րն էր իրենց յանցանքը:
3. Ինչ սորվեցաք այս պատմութենէն:



1. *Բարդ բառով մը ըսէ՛ք հետեւեալ բառակապակցութիւնները. ձիւնէ շինուած գնդակ, գրելու սեղան, գետի ափ, տպելով գրուած գիր, հօր եղբայր, մօր քոյր, ծաղիկ դնելու աման, նարինջի գոյն:*

2. *Ուշադրութիւն ըրէ՛ք հետեւեալ զոյգ շարքի բառերուն ուղղագրութեան.*

ա) ընկեր, ընկոյգ, ընկուզենի, ընդարձակ, ընդունիլ, ընտանիք, ընտիր, ընտրել, ընկղմիլ, ընել, ըմպել, ըմպանակ, ըմբռնել, ըմբոստ, ըղձալ (փափաքիլ)。
բ) զբաղիլ, ստանալ, զգոյշ, սկսիլ, սկիզբ, սպասել, ստիպել, զգայուն:

 ՍՈՐԿԻՆՔ.

Բառերու սկիզբը լսուող **ը**-ն կը գրուի **ն** եւ **մ** բաղաձայններէն առաջ:

Բացառութիւն են **ըլլալ, ըսել, ըղձալ, ըստ** բառերը:

ՀԱՆԵԼՈՒԿ

Կը քակէ մէջքի բարալիկ գօտին,
Կը պարտ՝ կռթնած իր միակ ուղքին:



ԲԱՐԻ ՄԱՐԴԸ

Յուրտ ճմեռ էր: Պզտիկ աղջիկ մը, պատին տակ նստած, եղեին կը ծախէր: Փաթթուած էր հին վերարկուի մը մէջ: Ատենատեն կը լսուէր անոր թոյլ ձայնը.

— Եղեի՛ն, եղեի՛ն, Նոր տարուան համար եղեի՛ն...

Ես ուզեցի տեսնել ծառը: Պզտիկ աղջիկը ձեռքը երկարեց դէպի ետեւի պարտէզը: Յոյց տուաւ գեղեցիկ եղեին մը:

— Դեռ կտրած չէ՞ եղեինդ,— հարցուցի ես զարմացած:

— Ո՛չ, բայց ես հիմա կը բերեմ սղոցը,— ըսաւ ու տուն վազեց:

Վերադարձաւ՝ սղոց մը ձեռքը: Յետոյ տխուր նայելով ինձի՝ ըսաւ.

— Գիտէ՞ք, հայրս տնկած է այս ծառը, երբ ես շատ պզտիկ էի: Ան երկու տարի առաջ մեռաւ:

Անոր նիհար ու ցուրտէն կապտած դէմքին վրայ, տխուր ասքերուն մէջ արցունքներ երեւցան:

Ես շատ յուզուած ըսի անոր.

— Եկուր մի՛ կտրեր հորդ տնկած ծառը, թող մնայ:

Փոքրիկը տխուր ժպտով նայեցաւ մարդուն ետեւէն: Ինչ բարի մարդ էր. չուզեց որ կտրուի իր հորը տնկած ծառը:

Աղջիկը նորէն նստաւ պատին տակ: Փաթթուեցաւ հին վերարկուին մէջ: Ձեռքերը դրաւ գրպանը ու յանկարծ գրպանին մէջ դրամ գտաւ... Եւ արցունքոտ ասքերով սկսաւ փնտռել այդ շատ-շատ բարի մարդը...



Չարցումներ եւ հրահանգներ

1. Աղջիկը ինչո՞ւ կը ծախէր եղեինը:
2. Ան ինչո՞ւ տակաւին չէր կտրած ծառը:
3. Հաւնեցա՞ք մարդուն ըրածը. ինչո՞ւ. ինչպիսի՞ մարդ մըն էր ան:
4. Աղջիկը ինչո՞ւ սկսաւ փնտռել այդ բարի մարդը:
5. Պատմեցէ՞ք այս պատմութիւնը համառօտ:



Ուշի ուշով կարդանք ու տեսնենք թէ ինչ մասերէ կազմուած են հետեւեալ բառերը.
 շաղիկ, կամացուկ, գետակ, ուրախութիւն, աշակերտուիի, անխելք:

Յիշենք.

Իկ, ուկ, ակ ան, ութին, ուիի եւ այլն մասնիկներ են, որոնք կը կոչուին **աճանց**:

Աճանցները կը դրուին բառին վերջը կամ սկիզբը եւ նոր բառ կը կազմեն:

Աճանց ունեցող բառերը կը կոչուին **աճանցաւոր բառեր**:

արցունք
արցունքոտ

ԻՆՉԻ ՇՆՈՐՀԻ ՅԱՂԹԵՑԻՆ



խաղ խաղադաշտ կիսախաղ

¹ փոխանցում — հոս՝ գրն-դակը մեկուն փոխանցելը՝ տալը

² իրաւարար — մրցումի դատարար

Դպրոցին բակը պասքեթպոլի մրցում կար: Աշակերտները, երկու մասի բաժնուած, կը վիճաբանէին թէ՛ որ խումբը պիտի յաղթէր:

— Ռուբէն, մի՛ ուշացներ, փոխանցէ,— կը լսուի խաղադաշտին ճախ կողմէն:

Ռազմիկն է՝ Ա. խումբին յարձակողներէն մէկը: Սակայն Ռուբէնը կ'ուզէ գնդակը ինք անցընել օղակին մէջ: Բայց չի կրնար, եւ գնդակը կ'անցնի Բ. խումբին: Բ. խումբին տղաքը գեղեցիկ փոխանցումներով՝ գնդակը կը մօտեցնեն օղակին: Կը փոխանցեն հոն ազատ կեցած իրենց խաղընկերոջը, որ առանց դժուարութեան՝ զայն կը նետէ օղակին մէջ:

Բ. խումբին կողմնակից աշակերտները դաշտը կը թնդացնեն ուրախ բացազանչութիւններով:

Ճիշդ այդ պահուն իրաւարարին² սուլիչը կը յայտարարէ առաջին կիսախաղին վերջը:

Բ. խումբին տղաքը, իրարու փաթեւած, ուրախ-զուարթ կը հեռանան խաղադաշտէն: Իսկ Ռուբէնին ընկերները, զինք շրջապատած, տաք-տաք կը վիճին:

— Ինչո՞ւ չէիր փոխանցեր գնդակը,— յուզուած կը հարցնէ Ռազմիկը:— Չէիր տեսներ որ ես ազատ կեցած էի:

— Այո՛, սակայն գնդակը կեդրոնէն ես բերած էի օղակին մօտ,— կը կմկմայ Ռուբէնը,— եւ ես նետել կ'ուզէի օղակին մէջ:

— Ռուբէն, կը սխալիս,— անոնց մօտենալով՝ կ'ըսէ Վարդանը.— չէ՛ որ դուն մեր ամբողջ խումբին յաղթանակին համար կը խաղաս: Եւ քու ընկերոջդ յաղթանակը քո՛ւ յաղթանակդ ալ կը նշանակէ:

Ռուբէնին դէմքէն կ'երեւեր թէ արդէն սկսեր էր հասկնալ իր սխալը:

Բ

Իրաւարարին սուլիչը կը հնչէ, եւ կը սկսի երկրորդ կիսախաղը: Մրցակից խումբերը նորէն խաղադաշտ կու գան: Գնդակը ձեռքէ ձեռք կ'անցնի:

Ահա Ռազմիկը արագ վազքով գնդակը կեդրոնէն օղակին մօտ կը բերէ: Չինք կը շրջապատեն մրցակից խումբի քանի մը խաղցողներ:

— Ռուբէն, բռնէ, շնուտ,— կը պոռայ Ռազմիկը:

Մինակ կեցած Ռուբէնը չէր յուսար թէ Ռազմիկը գնդակը օղակին մօտ իրեն պիտի փոխանցէր. չէ՛ որ մինչեւ հոն ինք բերած էր: Սակայն գնդակը արդէն Ռուբէնին ձեռքն էր. ոչ ոք կրնար խանգարել: Եւ յաջողութեամբ զայն օղակին մէջ կը նետէ:

— Կեցցես, Ռուբէն, կեցցես,— կը լսուի այս ու այն կողմէն:

«Միթէ արժանի եմ այդ «կեցցէ»ներուն. չէ՞ որ Ռազմիկն էր յաղթանակին բուն պատճառը»,— կը մտածէր Ռուբէնը:

Գնդակը Վարդանին ձեռքը կ'անցնի: Վարդանը արագօրէն զայն կը փոխանցէ Աշոտին, վերջինս ալ՝ Ռուբէնին, որ օղակին մօտ էր: Բայց միւս կողմը աւելի յարմար դիրք ունէր Ռազմիկը: Ռուբէնը գնդակը անոր կը փոխանցէ, եւ Ռազմիկը զայն օղակին մէջ կ'անցընէ: Ռուբէնը յուզուած կը մօտենայ ու կը սեղմէ Ռազմիկին ձեռքը...

Կը խաղայ ամբողջ խումբը, կը յաղթէ ամբողջ խումբը...

Չարցումներ եւ հրահանգներ

1. Խաղի ատեն Ռուբէնին բնաւորութեան մէջ ի՞նչ թերութիւն նկատուեցաւ:
2. Այդ թերութիւնը ի՞նչ վնաս տուաւ:
3. Երկրորդ կիսախաղին Ռուբէնին խումբը ինչի՞ շնորհիւ յաղթանակ տարաւ:
4. Մարզանքը ի՞նչ օգուտներ կու տայ. պատանիներուն մարմինը միայն կը զօրացնէ, թէ՞ միեւնոյն ատեն անոնց բնաւորութիւնը կը կերտէ:



1. Տրուած բառերուն մէջէն գտէք **հականիշները** եւ գրեցէք քով քովի. անոնցմէ երեք զոյգը գործածեցէք նախադասութիւններու մէջ.

աշխատասէր, ծոյլ, քաջ, բարի, համեստ, չար, պարծնկոտ, ծախել, գնել, վախկոտ, երթալ, ուշադիր, գալ, յաղթել, անուշադիր, պարտուիլ, առաջ, ուշ, կանուխ, յետոյ:

Օրինակ՝ յաղթել — պարտուիլ:

2. Ընդօրինակեցէք հետեւեալ **բարդ բառերը**. ըստ բառը կազմող մասերուն՝ ըսէք անոնց իմաստները.

խաղաղաշտ, խաղընկեր, կէտօր, կիսախաղ, ընկերասէր, արագավագ, ժպտադէմ, մշտադալար, արեւավառ, դասընկեր:



ԹՈՂՈՒՆՆԵՐՈՒՆ ԲԱՐԵԿԱՄԸ

Օր մը Ալեքսանը հայրիկին հետ այգի գացած էր: Տեսաւ որ խաչաձեւ փայտի մը ծայրը գլխարկ մը անցուցած են: Հագուստ ալ հագցուցած են անոր: Ալեքսանը զարմացած հարցուց հայրիկին.

— Ասիկա ինչ է, հայրիկ:

— Խրտուիլակ է:

— Խրտուիլակը ինչ է:

— Մարդու նման է, բայց մարդ չէ: Թռչունները փախցնելու համար է, որ խաղողը չուտեն:

Ալեքսանը լռեց:

Յաջորդ օրը ան մայրիկէն ողկոյզ մը խաղող խնդրեց եւ պատշգամ ելաւ: Ծնծղուկներ կու գային հոն՝ կեր փնտռելու: Մօտեցաւ անոնց եւ ըսաւ.

— Սիրուն ծնծղուկներ, գիտեմ որ դուք խաղող շատ կը սիրէք, բայց ձեզ կը վախցնեն խրտուիլակով: Ահա ես խաղող բերած եմ ձեզի: Մի՛ վախնաք, եկէք խաղող կերէք:

Ալեքսանը խաղողի ողկոյզը դրաւ պատշգամը՝ սեղանին վրայ, ու ներս մտաւ: Սկսաւ հետեիլ ապակիին ետեւէն: Երկու ծնծղուկ մօտեցան ողկոյզին, սկսան կտուցով ծակծկել խաղողին հատիկները եւ ուտել: Քիչ ետք անոնք թռան գացին: Հիմա ալ ուրիշ ծնծղուկներ եկան եւ, ատի ի համարձակ մօտենալով՝ սկսան կտցել խաղողին հատիկները: Կ'երեւի՝ առաջին երկու ծնծղուկները կանչած էին իրենց ընկերները:

Մայրիկը խոհանոցէն տեսաւ այս ամէնը: Առաջ զարմացաւ, յետոյ սկսաւ խնդալ: Եւ սենեակ մտնելով՝ ըսաւ հայրիկին.

— Տես, տղադ խաղողով կը հիւրասիրէ թռչունները:

— Ինչ կ'ընես, Ալեքսան,— հարցուց հայրը տղուն:

— Թռչունները խրտուիլակէն կը վախնան ու չեն կրնար խաղող ուտել. թռչունները խաղողով կը հիւրասիրեմ, հայրիկ:

թռչուն
թռչիլ

Հարցումներ եւ հրահանգներ

1. Ինչ է խրտուիլակը. զայն ինչո՞ւ կը դնեն այգիներուն մէջ:
2. Պատմեցէ՛ք՝ Ալեքսանը ինչպէ՞ս օգնեց թռչուններուն եւ ինչո՞ւ:
3. Դուք ինչպէ՞ս կ'օգնէք կենդանիներուն:

Կազմեցէ՛ք *ածանցաւոր բառեր*՝ փակագիծերուն մէջ տրրուած *ածանցներէն* յարմարը դնելով *հետեւեալ բառերուն* վրայ.
հայր, հատ, անտառ, ուրախ, ճաշ, կիրթ, թռչ(իլ), գառ(ն), ուսուց(անել), խնծոր, (իչ, իկ, ուն, ական, ութին, արան, ան, ենի, ուկ, ային):

ՀԱՆԵԼՈՒԿ

Գարնան օրերուն
Արցունք կը մաղէ,
Աշունը քաղցր
Ուլունք կը կախէ:

ժ. Ե. Քասունի

ՔԱՐԵՐԸ ԿԸ ԽՕՄԻՆ

Երկիր մը կար, որուն բնակիչները լաւ սովորութիւն մը ունէին. երբ բարի գործ մը կատարէին, պզտիկ ձերմակ քար մը կը դնէին գաւաթի մը մէջ: Երբ գաւաթը կը լեցուէր, կը համրէին այդ քարերը՝ տեսնելու թէ որքան բարի գործեր կատարած էին ժամանակի մը ընթացքին:

Օր մը ուսուցչուհին այդ սովորութեան մասին պատմեց իր աշակերտներուն:

Բաւական ժամանակ անցաւ:

Առտու մը, երբ ուսուցչուհին դասարան մտաւ, աշակերտները բան մը կը փսփսային իրարու:

— Օրիորդ, Արամը բան մը պիտի ցոյց տայ ձեզի, բայց կ'ամչնայ:

Արամը ուշիմ¹, բարի եւ ամչկոտ տղայ մըն էր:

— Արամ, հոն եկուր,— ըսաւ ուսուցչուհին:

Արամը եկաւ. ձեռքերուն մէջ բան մը կը պահէր:

— Ինչ պահեր ես, Արամ:

— Օրիորդ, ձեր պատմածէն օրինակ վերցուցի. գաւաթ մը լեցուցի ձերմակ քարերով:

— ձերմակ քարերով, այսինքն՝ բարի գործերով...

— Այո, օրիորդ:

Ուսուցչուհին զարմացած էր: Պահ մը նայեցաւ բոլորին եւ յուզուած ու շփոթած ըսաւ.

— Արամ, պատմէ այս քարերուն պատմութիւնը:

Բ

Արամը գաւաթը սեղանին վրայ դրաւ ու կեցաւ: Բոլորն ալ լուռ կը սպասէին, որ Արամը խօսեցնէր քարերը, մեր գիտցած պարզ քարերը:

Եւ Արամը սկսաւ պատմել թէ ամէն մէկ քարը ինչո՞ւ դրած էր գաւաթին մէջ.

— Քար մը դրի, երբ մայրիկս շատ յոգնած էր, սեղանը ես ժողվեցի եւ պնակները լուացի:

Այս մէկն ալ, հա՛... մեր շէնքին եօթներորդ յարկը ծեր մարդ



ժողով
ժողվել

¹ ուշիմ — խելացի եւ ուշադիր

մը կը բնակի: Տեսայ որ ծանր սակառ մը կը բերէր: Վազեցի, ձեռքէն առի սակառը եւ իր տունը տարի:

— Ապրիս, Արամ, իսկ այս ճերմակ ու կլոր պզտիկ քարը ինչ կը յիշեցնէ քեզի:

— Մայրս հինգ լիբանանեան ոսկի տուաւ, որ երկու ոսկինոց հաց գնեմ: Փռապանին տուի հինգ ոսկին: Փոխանակ ինծի երեք ոսկի վերադարձնելու, ութ ոսկի տուաւ: Ետ տուի հինգ ոսկին: Մարդը զարմացաւ ու շոյեց գլուխս:

Իսկ այս մէկը... Պզտիկ աղջիկ մը իր մայրը կորսնցուցեր էր եւ կու լար մեր տան առջեւ: Միասին փնտռեցինք իրենց տունը եւ գտանք: Աղջիկը վազեց ու փաթթուեցաւ իր մայրիկին: Այս քարը ատոր համար դրի:

— Ապրիս, Արամ, կարծեմ յոգնեցար: Կրնաս տեղդ նստիլ:

— Թող պատմէ, օրիորդ, շատ հաճելի է,— ըսաւ Վահէն, որ տիպար աշակերտ մը չէր:

— Երկու ընկերներս կը կռուէին բակին մէջ: Մօտեցայ, զիրենք հաշտեցուցի: Յետոյ երեքս միասին խաղացինք...

Արամին քարերը շատ էին. շատ բարի գործեր կատարած էր ան...

Հարցումներ եւ հրահանգներ

1. Ուսուցչուհին ինչ պատմեց իր աշակերտներուն:
2. Դասարանի աշակերտներէն ո՞վ հետեւեցաւ այդ լաւ սովորութեան. պատմեցէ՞ք ինչ բարի գործեր կատարած էր ան:
3. Ինչպիսի՞ տղայ մըն է Արամը. բնութագրեցէ՞ք զինք:
4. Ձեզմէ որո՞նք պիտի ջանան նմանիլ անոր. **գրեցէ՞ք փոքրիկ պատմութիւն մը այդ մասին՝ պատասխանելով հետեւեալ հարցումներուն.**

ա. **դո՞ւք ինչ բարի եւ լաւ գործեր կ'ուզէք ընել.**

բ. **ո՞րն է ձեզի համար ամէնէն լաւ եւ ամէնէն զէշ գործը:**



Հետեւեալ բառերուն մէջէն զատեցէ՞ք այն բառերը, որոնք **ո՛չ բարդ են, ո՛չ ածանցաւոր.**

մարդ, հաց, հացավաճառ, տնակ, անտուն, բարձրահասակ, բարձր, հասակ, մանկապարտէզ, գոյն, վարդագոյն, Տիգրանուհի, վարդ, պարտէզ, տուն:

Յիշենք.

Այն բառը, որ ո՛չ բարդ է, ո՛չ ածանցաւոր, կը կոչուի պարզ բառ:
Մարդ, հաց, բարձր, հասակ, վարդ, գոյն, տուն պարզ բառեր են:

ԱՍՍԱՅՈՒԱԾՔ

Սորվածդ արժէք կ'ունենայ, երբ գործադրես զայն:



ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՀԵՏ

ԵՐԳ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԱՍԻՆ



Հայրենիքէն անուշ ու թանկ¹
Ուրիշ ինչ կայ երկինքին տակ:

Ձուրը անուշ,
Հողը անուշ,
Կարմիր արեւ,
Շողը անուշ,
Արտերը ծով,
Դաշտերը զով,
Լեռները վեր,
Արծիւը տէր:

Հայրենիքէն անուշ ու թանկ
Ուրիշ ինչ կայ երկինքին տակ:
Ան է տուած

Ինծի անուն
Ու նուիրած
Հայոց լեզուն,
Ճերմակ Մասիս,
Կապոյտ Սեւան
Եւ վարդազոյն
Նոր Երեւան:
Ուր ալ երթամ,
Ինչ ալ ըլլամ,
Ես զաւակն եմ
Հայաստանի:

Հայրենիքէն անուշ ու թանկ
Ուրիշ ինչ կայ երկինքին տակ:

**թանկ
թանկագին
թանկարժէք**

¹ թանկ — թանկագին՝
արժէքաւոր, սուղ

Հարցումներ եւ հրահանգներ

1. Սիւլվա Կապուտիկեանի այս բանաստեղծութեան համաձայն՝ նկարագրեցէք Մայր Հայրենիքը:
2. Ինչո՞ւ Հայրենիքը թանկ է մեզի համար:
3. Հայրենիքը ինչ տուած է իր զաւակներուն:
4. Ինչ միտք արտայայտուած է հետեւեալ տողին մէջ. «Ուր ալ երթամ, ինչ ալ ըլլամ, Ես զաւակն եմ Հայաստանի»:
5. Դուք ինչ ձեռով կ'ուզէք արտայայտել ձեր սէրը Հայրենիքին հանդէպ:



1. Դասին մէջէն գտէ՛ք տասը պարզ բառեր եւ գրեցէ՛ք այբբենական կարգով:

2. Անուշ հայրենիք, կարմիր արեւ, զով դաշտեր, ճերմակ Մասիս, կապոյտ Սեւան բառակապակցութիւնները գործածեցէ՛ք նախադասութիւններու մէջ:

ԱՍՍՑՈՒԱԾՔ

Մարդը՝ առանց հայրենիքի,
Նման է տխրակի՝ առանց վարդի: